«Արմավիր 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործությունը և Կոմիտասը, որպես հայ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Դավթյան
Քաղաք Մեծամոր թիվ 1հիմնական դպրոց

Ղեկավար՝ Սոնիկ Սմբատյան

ԱՐՄԱՎԻՐ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1. Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն 5

2. Ժողովրդական երգի թեմատիկան և ժանրերը……6

3. ԿՈՄԻՏԱՍԸ, ՈՐՊԵՍ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ և ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴԻՐ 10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային մշակույթն այն բազմաշերտ հայելին է,որում արտացոլված է ժողովրդի դարավոր պատմությունը,կարևոր ճակատագրական դրվագները, ավանդույթները,սովորույթները,կենցաղը, ժողովրդի ծոցից ելած հերոսների կյանքն ու նրանց անձնվիրության դրսևորումները՝ճակատագրական շրջադարձերի ժամանակ,ինչպես նաև այն հույզերն ու զգացումները ,որոնք ուղեկցել են մարդկանց առօրյայում,ուրախության և տխրության պահերին։Իր ապրածն ու զգացածը մարդն արտահայտել է պատկերելով, քանդակելով, ասելով և երգելով։Վերջինիս արդյունքում ձևավորվել է ազգային մշակույթի կարևորագույն ոլորտը՝երաժշտարվեստը։

Ազգային արվեստի պատմությունը ժողովրդի պատմության կարևոր մասն է ,որը ներկայացնում է ժողովուրդի հոգևոր կյանքի զարգացման ընթացքը գեղարվեստորեն։ Հայ ժողովուրդն ունի հարուստ պատմական անցյալ, լի բազմապիսի փորձություններով ,որոնք ավելի են իմաստացրել ժողովրդին,ինչն էլ հարստացրել է ազգի մշակույթն ու նրա մասը կազմող ժողովրդական երաժշտական ստեղծագործությունը։

Ժողովրդական երգն իր գոյությունը պահպանել է վաղնջական ժամանակներից մինչ օրս։Գեղջկական երգի գոյության ընթացքում ստեղծվել են բազմաթիվ ժանրեր՝տղամարդկանց և կանանց տարաբնույթ ու բազմազան աշխատանքների հետ կապված աշխատանքային երգեր, հայ ժողովրդի կամքն ու ուժը,հոգևոր հարստությունն ու գեղեցկությունն ընդհանրացնող վիպերգեր,ժողովրդի ազգային ազատագրական պայքարն ու նրա ըմբոստ ոգին արտահայտող պատմական երգեր,դաստիարակչական մեծ նշանակություն ունեցող կատակերգեր,երգիծական երգեր,հուզառատ սիրո երգեր,կենցաղում տարածված սովորույթները,բարքերը և արարողությունները ներկայացնող ծիսական երգեր,օտարության մեջ պանդուխտի հոգեկան ապրումներն արտացոլող անտունիներ և այլն։

Ժողովրդական երաժշտությունը բանավոր արվեստ է ։Այն ստեղծվել է,երբ դեռ գիր չկար։Ժողովրդական երգի ստեղծման գործընթացը՝ տարերային է .մեկը հորինում է երգը,մյուսը՝հղկում,երրորդը՝հիշում և հաղորդում հաջորդ սերունդներին։ «Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, – ասում էր Կոմիտասը, – գնացեք և սովորեք

նրանից»:



Մեծանուն երգահան Կոմիտասի (Սողոմոն Սողոմոնյան) թողած ստեղծագործական ժառանգությունն ահռելի նշանակություն ունի հայ երաժշտության համար:

Հիմնվելով արևմտաեվրոպական երաժշտության զարգացման փորձի ու հայ կոմպոզիտորական դպրոցի ձեռքբերումների վրա և հետազոտելով հայ ավանդական երաժշտության առանձնահատկությունները՝ նա ստեղծեց կոմպոզիտորական ինքնատիպ է և չկրկնվող ուրույն ոճ: Դրանով իսկ Կոմիտասը հայտնի է, որպես հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր:

Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն

Ժողովրդական երգը ժողովրդի կյանքի ու մշակույթի գեղարվեստական պատմությունն է,նրա բանավոր տարերգությունը։Ժողովրդական երգում դրսևորվել են ժողովրդի աշխարհայացքը,վերաբերմունքն ու մոտեցումը կյանքի հասարակական ու պատմական ,սոցիալական ու կենցաղային երևույթներին։

Ազգային մտածողությունը պայմանավորվում է ժողովրդական երգին բնորոշ ազգային լեզվի ինքնատիպությունը ։

Ժողովուրդը հղկում,պահպանում ,հաղորդում է հաջորդ սերունդներին այն ամենը,ինչ արժեքավոր է ,հարազատ ,ազգին։

Ժողովրդական երգարվեստի նշանակությունը մեծ է եղել նաև հայ ազգային մասնագիտացված դպրոցի ձևավորման ու կազմավորման շրջանում,դարձել է նրա հիմքը։Ազգային կոմպոզիտորական արվեստը ծնունդ է առել ժողովրդական երաժշտական ստեղծագործությունից։Խորիմաստ գաղափարներով հանդերձ, գեղջուկի արվեստը բնորոշվում է արտահայտման անմիջականությամբ ու ներգործման մեծ ուժով,այսինքն գեղարվեստական է։Այս առումով այն դասական է։Կոմպոզիտորական ստեղծագործությունը կիրառում է ժողովրդական երգի ինքնատիպ ձայնելևէջը,ճկուն կշռույթը,հարուստ ձայնակարգերը։

Ժողովրդական երգը մասնագիտացված երաժշտության մեջ կիրառվում է 3 հիմնական ձևով։

Մեջբերում:Կիրառվում է ժողովրդական երգն ամբողջությամբ և հարստացվում հարմոնիայի,պոլիֆոնիայի,գործիքավորման և զարգացման բազմազան միջոցներով՝ստանալով գեղարվեստական նոր ձևավորում։

Ժողովրդական երգի սիմֆոնիզացիա։ Հիմք է ընդունվում ժողովրդական երգն ամբողջությամբ կամ նրա մի մասը և մշակվում,որի ընթացքում կերպարը բացահայտվում է բազմակողմանիորեն,դրսևորում իր մեջ պարփակված արտահայտչական հնարավորությունները։

Ժողովրդական երգի լեզվի և կերպարների ազդեցություն: Կոմպոզիտորն իր ստեղծագործության մեջ ժողովրդական երգ չի օգտագործում,բայց գտնվում է դրա լեզվական և կերպարային ազդեցության տակ:

Գուսանա-աշուղական արվեստը ժողովրդական երաժշտության մասնագիտացված ճյուղն է:Այն եղել է և քաղաքի բարձր, և ստորին,աշխատավորական խավերի արվեստը:Ավելի ուշ այն դարձավ արհեստավորական խավերի երաժշտական մտածողության արտահայտիչը, իսկ քաղաքի երաժշտական մտածողությանարտահայտիչը մնում է քաղաքային երգը:

Իր ժողովրդի երաժշտական լեզվին տիրապետելը ամեն մի ստեղծագործողի սրբազան պարտքն է :Մայրենի լեզվի և ազգային երգի պահպանումը ազգի գոյության ու հարատևման հիմքն է:

Երաժշտական արտահայտչամիջոցների համալիրը կոչվում է երաժշտական լեզու:Քանի,որ երաժշտությունը ժամանակային և հնչյունային արվեստ է նրա տարրերն են՝ձայնակարգը,ձայնելևէջը,մետրը և կշռույթը:

Ժողովրդական երգի թեմատիկան և ժանրերը

Գեղջկական երգը մեղեդու և խոսքի օգնական միասնությունն է :Գեղջկական երգի բանաստեղծական խոսքը ,սովորաբար իմաստուն է և պարզ:Այն հակիրճ է ,բայց բովանդակությամբ խորն ու հարուստ:Երգի բովանդակության և մեղդիական զարգացման կապը փոխադարձ է:

Պարերգեր: Պարերգերը կրկնակներով և առանց կրկնակների փոքրիկ երգեր են,որոնք երգվում են՝պարելիս:

Գեղջկական երաժշտության մեջ պարերգերը հայտնի են տարբեր անուններով՝խաղ,յայլի,գյոնդ,թաղալու,մանի:

Պարերգերի արմատները կապված են հեթանոսական պատմաշրջանի հետ:

Ժողովրդի կերպարային մտածողությունն ու բանաստեղծական ոգին իրենց վառ արտահայտությունն են գտնում պարերգերում ,որոնք հարուստ են համեմատություններով ու այլաբանություններով։Օրինակ ,ժողովրդական խաղիկներում մեծ տարածում է ստացել խնձորի օգնությամբ սիրո խոստովանության ձևը։Սիրահար պատանիները սեր են խոստովանել՝սիրած աղջկա ոտքերիտակ կամ դռան առաջ խնձոր գցելով,հանդիպման լուր տվել խնձոր ուղարկելով,սեր ակնկալել՝յարին խնձորի նմանեցնելով,սերը մերժել՝տված խնձորը չընդունելով և այլն։Սերը պարերգերի հիմնական թեման է։Պարերգերի բնույթը հիմնականում կենսուրախ է։Պարերգն ընդհանրացված և օբյեկտիվ տրամադրության,կոլեկտիվի,ոչ թե անհատի տարերգի արտահայտությունն է,որի հոգեբանության ու մտածողության ամենաէական հատկանիշը՝լավատեսությունն է։Պարերգերի կատարման ձևը շուրջպարն է,խմբական երգ-պարը։Պարերգերը մեծ մասամբ սկսում են հանդիսավոր,դանդաղ,իսկ հետո արագանում են,աշխուժանում,դառնում առույգ ու վստահ ,վերջում վերածվում կրակոտ ցատկերի։Պարերգերին բնորոշ է պարի թռիչքներին ու ցատկերին համապատասխանող բացականչությունների օգտագործումը,որոնք նպաստում են պարի թեթև ընթացքին և հաճախ կազմում պարերգի կրկնակը։Կան կրկնակներ,որոնք լրացնում են,խորացնում բանաստեղծական միտքը,հաղորդում նրան զգացմունքայնություն։Շատ երգեր կրում են կրկնակի անունը և ճանաչվում կրկնակով՝<<Սոնա յար>>,<<Կարճլիկ-կուրճուլիկ>> և այլն։Կրկնակները նաև ապրում են ինքնուրույն կյանքով՝անցնելով երգից երգ՝ հանդես գալով տարբեր խաղիկներում,որոնք կարող են չունենալ նույնիսկ կերպարային բովանդակության ընդհանրություն։Կրկնակն ավելանալով կարճ ոտանավորին՝ նպաստում է երաժշտական ձևակազմավորմանը։Երբեմն կրկնակի փոխարեն հանդես է գալիս կրկներգը,ինչն ավելի հազվադեպ է պատահում։Կրկներգներն ավելի ծավալուն են և ունեն ինքնուրույն բովանդակություն։Պարերգի բոլոր տները սկսում է պարագլուխը,իսկ խումբը երգում է կրկնակը։Կան պարերգերի պարզ և բարդ ձևեր։Պազ ձևերը ծավալվում են մեկ ամբողջական կառուցվածքի՝ֆրազի, նախադասության սահմաններում։Պազ ձև ունեցող պարերգում կարող են չլինել ոչ միայն միջնավարտներ ,այլև վերջնավարտներ։Կրկնությունը պարերգը կազմող ու

ձևավորող գործոն է։Պարերգերի բարդ ձևեր են՝ երկու և ավելի նախադասություններից բաղկացած պարբերությունը երկմաս և եռամաս երգային ձևերը։Պարերգը կազմակերպող հիմնական սկզբունքը,դարձյալ ,կրկնությունն է։Այսպիսով պարերգերը փոքրիկ երգեր են,որ կատարվում են պարելիս։Պարերգը բարդ հավաքական բնույթի երգային ժանր է,նրա անբաժան ուղեկիցներն են պարը,խաղը,խոսքը,դիմախաղը։Պարերգն արտահայտում է կոլեկտիվի տրամադրությունը ընդհանուրի զգացմունքները,կատարման եղանակը շուրջպարն է։Պարերգի թեմատիկան բազմազան է պատմական,

աշխատանքային,հարսանեկան,կատակի,բայց հիմնականը սիրայինն է։ Ձևակառուցման էական հատկանիշը կրկնությունն է։Պարերգին բնորոշ է հայ գեղջուկ երաժշտության բոլոր ձայնակարգերը։

Կատակերգեր և երգիծական երգեր- Կատակն ու երգիծանքը,կատակերգերն ու երգիծական երգը յուրօրինակ միջոցներ են ,որոնց օգնությամբ ժողովուրդը քննադատում է հասարակական կյանքում տեղ գտած թերությունները և առաջադրում իր բարոյական չափանիշները։Երգիծական երգերի ու կատակերգերի ու բովանդակությունը կենցաղում տեղ գտած ամոթալի երևույթների ,մարդկային բնավորության բացասական գծերի ծաղրն է՝ծուլություն,թափթփվածություն,մեծամտություն,շատախոսություն,հարբեցողություն, կաշառակերություն և այլն։Երգիծանքի ձև է անուն դնելը։Երգիծական երգերի ու կատակերգերի արժեքը նրանց դաստիարակչական մեծ նշանակության մեջ է։Երգիծական երգերն ու կատակերգերն կարևոր են ոչ միայն իրենց դաստիարակչական նշանակությամբ ,այլև երաժշտական լեզվի հնարքների օգտագործման բազմազանությամբ ու հնարամտությամբ։

Օրորներ-Օրորը ժողովրդական երգաստեղծության հնագույն և կենսունակ ժանրերից է։Օրորների հիմնական թեման մայրական սերն է՝ դեպի իր սիրասուն զավակը։Օրորների մեջ կան նաև այնպիսի երգեր,որոնց բովանդակությունը անմիջական կապ չունի երեխային քնեցնելու հետ։Դրանց թեմատիկան հաճախ պատմական է։Հասկանալի է ,որ նման երգերը երգվել են տղա երեխային

քնեցնելիս,որոնց հետ են կապել ընտանիքի,երկրի, ժողովրդի ծանր ու լուրջ հոգսերի լուծումը։Օրորները ժողովրդական երգաստեղծության բարդ ժանրերից են։Օրորները հիմնականում լայնաշունչ են,մեծ հնչյունաձավալով։Մեղեդիները գեղեցիկ են շնորհիվ զարդարուն կշռույթի։ Օրորները ժողովրդական երգաստեղծության զարգացած ժանրերից են,դրանք հարուստ են զարտուղումներով և շեղումներով։Կանայք ընտանիքի բարքերն ու սովորույթները պահպանողներն են ,նրանց միջոցով երգերը, երաժշտության ազգային ոգին անցնում է սերնդեսերունդ։

Քնարական երգեր-Քնարական երգերը հայկական ժողովրդական երգաստեղծության ամենամեծ բաժինն են կազմում։Այստեղ խմբավորվում են սիրո,որբության, օտարության թեմաներով ստեղծված ինչպես նաև հոգեկան խորն ապրումներ պատկերող երգերը։

Սիրո քնարական երգեր-Սիրո քնարական երգերը արտացոլում ենխորը զգացմունքներ,հոգեկան հուզումնալից ապրումներ։Բնության դերը սիրո երգերում նշանակալից է։Սիրո խաղիկները զուրկ են կրկնակներից։Սիրո երգերը լինում են դժբախտ կամ երջանիկ սիրո երգեր։Երջանիկ սիրո երգում հաճախ կատարվում է սիրած էակի գեղեցկության գովքը։Դժբախտ սիրո երգերը լինում են անպատասխան սիրո երգեր,այդ երգերը թախծոտ են։

Որբության թեման քնարական երգերում- Բողոք և տրտունջ կա որբության թեմայով քնարական երգերում։Մարդկային հոգեկան խորն ապրումներն արտացոլված են քնարական լայնաշունչ երգերում։Քնարական երգերի մետրը հիմնական կայուն է։Քնարական երգերը գեղեցիկ են անկեղծ ու անմիջական։

Պանդխտության երգեր-Հայկական ժողովրդական երգարվեստում պանդխտության երգերը կոչվում են նաև անտունիներ։Դրանք հայրենի երկրից հեռացած պանդուխտի, երջանկություն ու բախտ որոնողների երգեր են՝նրանց կարոտից այրվող սրտի, վշտի ու հոգեկան ծանր ապրումների մասին։Պանդխտության երգերը ծնվել են քաղաքական,սոցիալ-տնտեսական իրադարձությունների ազդեցությամբ ,որոնք ստիպել են հայերին հեռանալ երկրից ,բռնել գաղթի և օտարության ճանապարհը։Պանդխտության երգերը կատարել են նաև գուսանները։

ԿՈՄԻՏԱՍԸ, ՈՐՊԵՍ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ և ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴԻՐ

Կոմիտասը շրջեց Հայաստանի շատ վայրերում՝ գրի առնելով հազարավոր հայկական, քրդական, պարսկական եւ թուրքական ժողովրդական մեղեդիներ, կատարեց երգերի մշակումներ: Լրջորեն զբաղվեց նաև գիտա-հետազոտական աշխատանքով. ուսումնասիրելով հայ ժողովրդական եւ հոգևոր մեղեդիները, աշխատելով հայկական խազերի վերծանման վրա: Կոմիտասն աշխարհի տարբեր երկրներում հանդես էր գալիս որպես հայ երաժշտության կատարող եւ պրոպագանդիստ: Կոմպոզիտորը սկսեց խորհել նաև երաժշտական խոշոր, մոնումենտալ ձևերի մասին: Մտադրվում էրստեղծել «Սասնա ծռեր» երաժշտական էպոսը և շարունակում էր աշխատանքը «Անուշ» օպերայի վրա, որը սկսել էր գրել 1904-ից:

Կոմիտասը Միջազգային երաժշտական ընկերության (ՄԵԸ) հիմնադիր անդամներից է: Նա բազում անգամներ հանդես է եկել իր զեկուցումներով և ներկայացրել հայ ժողովրդական երգերն ու դրանց սեփական մշակումները: Ճեմարանի քառաձայն երգչախմբի հետ համերգներ է տվել Էջմիածնում, Երևանում, Թիֆլիսում, Բաքվում: 1940թ. –ին Կ. Պոլսում կազմել է 300 հոգուց բաղկացած «Գուսան» (1912թ-ից՝ «Հայ գուսան») բազմաձայն երգչախումբը: Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնումԿոմիտասի՝ արական երգչախմբի համար գրած վեհաշունչ «Պատարագը»: Իր բազմակողմանի գործունեության մեջ առավել կարևորը ստեղծագործությունն է և հավաքչական ու գիտական աշխատանքը, որոնք վկայում են գեղջկական կենցաղի գերազանց իմացության, ազգային ոգին ամբողջությամբ իր մեջ կրող, գեղագիտական բազմապիսի հնարանքների տիրապետող և գիտնականի վերլուծական միտք ունեցող վարդապետի մասին:

ԵՐԱԺՇՏԱԳԵՏ

Կոմիտասի գործունեության

կարևորագույն ոլորտներից է
երաժշտագիտական
աշխատանքը: Իր գիտական աշխատանքի արդյունքները նա ներկայացրել է տարբեր

լսարաններում, այդ թվում՝ Միջազգային երաժշտական ընկերության համաժողովներին: Հայ հոգևոր և ժողովրդական երաժշտության հետազոտության արդյունքում նա հանգեց հայ մշակույթի համար հիմնարար նշանակություն ունեցող մի շարք դրույթների և հայտնագործությունների, որոնցից հատկապես կարևոր են.

ա) Հայ երաժշտության զարգացման պատմա-աշխարհագրական, սոցիալական հիմքերի կարևորումը: Կոմիտասի կարծիքով՝ բազմաթիվ գործոններ են ձևավորում տվյալ ազգի երաժշտությունը (աշխարհագրական դիրք, բնակլիմայական պայմաններ,լեզու):

բ) Ժանրային դասակարգումը:
գ) Հայ երաժշտության հնչյունաշարերի բացահայտումը: Կոմիտասը ցույց տվեց, որ հայ երաժշտության հիմքում ընկած ձայնակարգերը տարբերվում են եվրոպական երաժշտության ձայնակարգերից կառուցվածքային որոշակի սկզբունքով:

դ) Կառուցվածքային հիմքի պարզաբանումը:

ե) Խազերի հետազոտությունը: Խազագրությունը հայկական միջնադարյան երաժշտական գրանցման (նոտագրության) համակարգ է, որը զարգացել է 8-րդ դարից ի վեր, զարգացման բարձր մակարդակի է հասել 12-15-րդ դարերում, շրջանառվել է մինչև 18-րդ դարը, այնուհետև դուրս է եկել կիրառությունից: Կոմիտասին հաջողվել էրերկար տարիների ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում գտնել խազերի վերծանման բանալին:

զ) Տարբեր ազգերի երաժշտության համեմատությունը: Կոմիտասը զբաղվել է համեմատական ֆոլկլորագիտությամբ: Հետազոտելով հարևանությամբ ապրող ազգերի, այդ թվում՝ հայկական, պարսկական, քրդական, տաճկական, արաբական, ասորական երաժշտության նմուշներ՝ նա պարզաբանում էր յուրաքանչյուր ազգիերաժշտությանը բնորոշ հատկանիշները:

ԿԱՏԱՐՈՂ
Կոմիտասը եղել է երգիչ և խմբավար: Ազգային մեներգային և խմբերգային դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասը սկզբնավորեց ազգային կատարողական ոճը: Կոմիտասի կատարողական արվեստը նպատակ ուներ ծանոթացնել հայրենիքում և նրա

սահմաններից դուրս «մեր զգացմունքների, վարքի ու բարքի ճշգրիտ պատկեր տվող ազգային երգերին» Կոմիտաս: Ոգեշունչ և խոհական կատարման ընթացքում նաև կատարման նրբերանգները:
Իր կատարողական արվեստի մյուս ճյուղով՝ խմբավարությամբ, Կոմիտասը սկսեց զբաղվել 1983թ. Էջմիածնում: Կոմիտասի աշխատանքը հատկապես հետևողական էր Էջմիածնի ճեմարանի և Պոլսի «Գուսան» երգչախմբերի երիտասարդ երաժիշտների մեջազգայինի զգացողությունը զարթնեցնելու և զարգացնելու ուղղությամբ:
Կոմիտասի թե՛ մենակատարային, թե՛ որպես երգչախմբի ղեկավար կատարումները լայն արձագանք են ունեցել ունկնդիրների շրջանում: Բազմաթիվ վկայություններ կան,որ նա հրաշալի ձայն է ունեցել և անգամ իր երգեցողությամբ ողջ լսարանին «ստիպել»արտասվել: Պահպանվել են 1912 թ. -ին Փարիզում իրականացված՝ Կոմիտասի երգեցողության ձայնագրություններ:
ՄԱՆԿԱՎԱՐԺ
Կոմիտասի մանկավարժական ունակությունների լավագույն վկայությունը իր աշակերտների կողմից նրա հանդեպ տածած սերն ու խոր հարգանքն էր:
Կոմիտասը դասավանդել է Գևորգյան ճեմարանում, ապա նաև մասնավոր դասեր է վարել Կոստանդնուպոլսում: Կոմիտասը ցանկություն ուներ Կոստանդնուպոլսում երաժշտանոց հիմնել: Ցավոք, նա նպատակը չհասցրեց իրականացնել, սակայն նա հասցրեց կրթել երիտասարդ, շնորհալի սերունդ, որոնցից ոմանք հայ երաժշտության բնագավառում կարևոր դեր խաղացին: Կոմիտասի աշակերտներից Բարսեղ Կանաչյանը դարձավ կոմպոզիտոր, Վարդան Սարգսյանը եղավ նրա ստեղծագործությունների տարածողը, Միհրան Թումաճանը շարունակեց զբաղվել բանահավաքչությամբ:
Վարդապետը դրել է հայ կոմպոզիտորական արվեստի հիմքերը, որոշ գործերի օրինակով ի ցույց դրեց այդ սկզբունքների կիրառման կենդանի նմուշներ»:

Արամ Խաչատրյան. «Կոմիտասը հայ երաժշտական դպրոցի հիմնադիրը եղել է և կմնաիմ մեծ ուսուցիչը»
«Կոմիտասի երաժշտությունը մաքրագործում և վեհացնում է հոգիդ, երջանկության կոչում: Ես կարծում եմ, որ հայ յուրաքանչյուր երաժիշտ պետք է իմանա Կոմիտաս և իր սրբազան պարտականությունը համարի այն մեծ ավանդների զարգացումը, որ կտակել է Կոմիտասը»:

Հովհաննես Չեքիջյան. «Ես կուզենայի հայ լինել միայն նրա համար, որովհետև այդ ժողովուրդը Կոմիտաս ունի»
«Կոմիտասը ինքը շատ անգամ նշել է, որ իր խմբերգային ստեղծագործությունները պետք է կատարել առանց որևէ գործիքի ընկերակցությամբ: Դժբախտաբար շատ-շատերը ուզում են մշակել Կոմիտաս, որն առնվազն հանդուրժելի չէ: Կոմիտասի խմբերգային ստեղծագործությունները մի մարգարտաշար է, որտեղ մի նոտայի փոփոխության դեպքում ամեն ինչ կխախտվի»:

Կոմիտասը հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրն է: Հիմնվելով արևմտաեվրոպական երաժշտության զարգացման փորձի ու հայ կոմպոզիտորական դպրոցի ձեռքբերումների վրա և հետազոտելով հայ ավանդական երաժշտության առանձնահատկությունները՝ նա ստեղծեց կոմպոզիտորական ուրույն ոճ, որը համաշխարհային երաժշտության պատմության մասշտաբով ինքնատիպ է և չկրկնվող: Կոմիտասի երաժշտության հարմոնիկ ու պոլիֆոնիկ դրսևորումները և ֆակտուրային շարադրանքի մոտեցումները երաժշտագիտական ընդունված բնորոշումների որևէ դասակարգման չեն ենթարկվում:

Կոմիտասի ստեղծագործական ժառանգությունն ընդգրկում է հայկական ժողովրդական ու հոգևոր երգերի մշակումներ և ժողովրդական սկզբնաղբյուրից անկախ (հեղինակային) գործեր: Մշակումները նույնպես ընդունված է համարել ստեղծագործություններ՝ նկատի ունենալով կոմպոզիտորական ինքնատիպ մոտեցումը: Կոմիտասը գրել է հիմնականում հետևյալ ժանրերում.

ա) Մեներգեր դաշնամուրի նվագակցությամբ: Կոմիտասը ձայնի և դաշնամուրիհամար մշակել է հայ ժողովրդական երգերի գլուխգործոցների իր իսկ բանահավաքչական գտածոներ: Թեմատիկան բազմազան է. փիլիսոփայական, քնարական ու սիրային երգերից մինչև կատակերգեր, պարերգեր: Որոշ երգեր կատարողական առումով վոկալ վարպետություն են պահանջում, ինչպես, օրինակ,

«Անտունին», «Կռունկը», «Ծիրանի ծառը» և այլն: Ժողովրդական երգը մշակելիս Կոմիտասը ընտրել է առավելապես հոմոֆոն- հարմոնիկ հյուսվածք, որը ստվերում է երգի ոչ սևեռուն բնույթը: Նա հաճախ կիրառել է կվարտային կամ կվինտային կատուցվածք ունեցող համահնչյուններ: Նման օրինակներից է «Երկինքն ամպել է» երգը, որտեղ ստեղծելով բարդ համահնչյուններ ամիացնելով կվարտաների և կվինտաների շարքը առավել ընդգծել է հայակական ձայնային ինքնատիպությունը:

Բանաստեղծության թովիչ կտավ է «Երկինքն ամպել է» երգի մշակումը: Մեղեդու առաջին երկու տակտի աննշան փոփոխություններով կրկնությունը, երգին խորհրդավորություն հաղորդելով, հնչում է, որպես անցյալի ապրումների նորի արձագանք:



Կոմիտասը նաև օգտագործել է ռոմանտիկական հարմոնիային հատուկ տերցիային կապերը: Այդպիսիք են «Քելեր, ցոլեր» երգի խմբերգային տարբերակը, «Գութանի երգը», «Անտունին» և այլն:

Քնարական թախծոտ երգերի շարքից է «Գարուն ա» երգը՝ տղային մոռացված աղջկա մասին: Գարնան անակնկալ ձյան նման է հոգին սառեցնող զգացմունքների «ձյունը»: Վշտալի ու անշտապ է երգի հուզական բացահայտումը բովանդակել դաշնամուրային նախանվագը:

Կոմիտասի երգերում նաև դիմել է տարբեր երգերի միացման: Երկու ժողովրդական երգերի միացման լավագույն օրինակներից է «Քելեր, ցոլեր» երգը: Երգում պարզ և իմաստալից է դաշնամուրի նվագամասը, որի գրեթե անընդհատ հնչողյա հնչյունը բնական ձով միացնում է երկու ժողովրդական երգերը՝ տունը և կրկներգը:





Եզրակացություն

Այսպիսով ազգային մշակույթի կարևոր մասը՝ երաժշտությունն է,որը ծնունդ է առել հնագույն ժամանակներից,և աստիճանաբար ձևավորվելով ,զարգանալով,փոփոխվելով արտացոլել է մեր նախնյաց կյանքը, կենցաղը,խոհերն ու ապրումները։
Հայ մարդու ձևավորման և կայացման գործընթացում անփոխարինելի է ազգային արվեստի, հատկապես երաժշտարվեստի դերն ու նշանակությունը և իմացությունը կարևոր դեր ունեն անձի ձևավորման ,համակողմանի զարգացման և կայացման վրա։Այս պատճառով ուսումնական գործընթացում անփոխարինելի է <<Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն >>դասընթացի դերն ու նշանակությունը։

Մեծ հայրենասեր, արվեստագետ Կոմիտասը հոգատարությամբ հավաքեց ևմշակեց հայ գեղջկական և ժողովրդակներգը և իր օրինակով խթանեց ազգային հոգևորարժեքների տարածմանը ու ճանաչմանը:

Կոմիտասը հանդիսացավ ոչ միայն հայկական կոմպոզիտորական ազգային նորագույն դպրոցի, այլև հայոց երաժշտական հնավանդ մշակույթի մասին արդի գիտության հիմնադիրը: Դրանով իսկ հաջորդ սերունդներին ժառանգություն թողնելովիր որդեգրած երաժշտական հարմոնիան և մեկնությունը:

Կոմիտասը այլևս գիտություն է՝ կոմիտասագիտություն՝ իր մեջ ներառելով հայրենասիրության, ազգագրության, մանկավարժության, երաժշտության, հագևորականության և կոմպոզիտարության ներդաշնակության փիլիսոփայություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մելիքսեթյան Գոհար <<Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն>>Երևան 2022թ.
2. Արշակ Բրուտյան,<<Ռամկական մրմունջներ>>Երևան ,1979թ.
3. «Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ», 1941թ., Երևան
4. «Կոմիտաս, հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության դասախոսության կոնսպեկտ», Կոմիտասի արխիվ, գրականության և արվեստի թանգարան
5. Ռ. Աթայան, «Հայկական խազերի նոտագրությունը», 1959թ.
6. «Կոմիտասի նամակը Չոպանյանին», 1903թ., Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան
7. «Կոմիտաս, Սնագիր ուրվագրեր», Կոմիտասի արխիվ, գրականության և
8. Ն. Թահմիզյան, «Կոմիտասը և հայոց հոգևոր երգարվեստի հարցերը», Գարուն արվեստի թանգարան ամսագիր, 1969թ., էջ 31-39
9. Ռ. Աթայան, «Գրչի խաղեր», Գարուն ամսագիր, 1969թ., էջ 16-21
10. Վ. Արծրոնի, «Կոմիտաս. Փշուր մը քնարերգություն», հեղինակային հրատարակություն, Երևան, 2004

https://www.hayagitaran.am/2014/10/id-4720.html

http://gevorgianseminary.am

https://armeniasputnik.am/

https://komitasmuseum.am

http://www.komitas.am/arm/researchers_komitas.htm

: